



MOCK ARBITRATION COMPETITION ԱՐՔԻՏՐԱԺ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ 2020

ԿԱՆՈՆՆԵՐ

Արբիտրաժ խաղ-մրցույթի գրավոր ընթացակարգով իրականացման

Ներածություն

Սույն կանոններով կարգավորվում է Արբիտրաժ խաղ-մրցույթի (այսուհետ՝ «Գրավոր Արբիտրաժ») գրավոր ընթացակարգով անկացնելու հետ կապված հարցերը: Այն փոխարինում է 8-րդ ամենամյա Արբիտրաժ խաղ-մրցույթի բանավոր լսումների փուլին, որն այլևս հնարավոր չի լինի անցկացնել COVID-19 համաճարակի բռնկման պատճառով:

Գրավոր արբիտրաժը մրցույթին մասնակցելու հնարավորություն է տալիս 8-րդ Արբիտրաժ խաղ-մրցույթին գրանցված և սահմանված ժամկետներում գրավոր դիրքորոշումներ ուղարկած թիմերին:

Գրավոր արբիտրաժի կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») նախատեսված են փոխարինելու (ևշված տեղերում) և, այլապես, լրացնելու Արբիտրաժ խաղ-մրցույթի գործող կանոնները՝ առանց բանավոր լսումների անցկացման նախապայմանի: Դատախաղի մնացած բոլոր կանոնները մնում են անփոփոխ: Կանոնները և Գրավոր արբիտրաժի կանոնները հասանելի են «Էյ-Դի-Ար» Կլինիկայի կայք էջում հետևյալ հղմամբ՝ <https://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>:

1 Կանոնները

- 1.1 Սույն կանոնները նախատեսված են փոխարինելու բանավոր ընթացակարգի կանոնները և սահմանելու Գրավոր Արբիտրաժի փուլի կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ մասնակցող թիմերի, արբիտրների ընտրության, ինչպես նաև մրցույթի հետ կապված այլ ընթացակարգային պայմանները:
- 1.2 Կանոններին առնչվող ցանկացած ժամանակացույց հանդիսանում է դրանց անբաժանելի մասը:
- 1.3 Կազմակերպիչն իրավունք ունի փոփոխելու Կանոնները և անհրաժեշտության դեպքում սահմանելու լրացուցիչ կանոններ մրցույթի անխափան ընթացքն ապահովելու համար:

2 Գրավոր Արբիտրաժը

- 2.1 Բանավոր փուլին փոխարինող Գրավոր Արբիտրաժին կարող են մասնակցել այն թիմերը, որոնք հաջողությամբ ուղարկել են իրենց՝ հայցվորի և պատասխանողի գրավոր դիրքորոշումները մինչև 2020 թվականի մարտի 14-ը, առավոտյան ժամը 08:00-ն: Եշված վերջնաժամկետից ուշ ստացված գրավոր աշխատանքներ ուղարկած թիմերը չեն կարող մասնակցել բանավոր փուլին փոխարինող Գրավոր Արբիտրաժի մրցույթին:
- 2.2 Բանավոր փուլին փոխարինող Գրավոր Արբիտրաժը բաղկացած է երկու փուլից՝ (1) ընդհանուր փուլ և (2) եզրափակիչ փուլ:



- 2.3 Ընդհանուր փուլում հակառակորդ թիմերը որոշվում են օնլայն վիճակահանության արդյունքում, որն անցկացվում է նախապես որոշված ժամակացույցով սահմանված օրը և ժամին:
- 2.4 Նույն օրը յուրաքանչյուր թիմին է ուղարկվում հակառակորդ թիմի գրավոր դիրքորոշումները:
- 2.5 Թիմերին տրամադրվում է 2 օր ժամանակ իրենց գրավոր երկրորդ դիրքորոշումները (rebuttal) պատրաստելու և ուղարկելու համար:
- 2.6 Մրցակցող թիմերի երկրորդ դիրքորոշումները ուղարկվում են արբիտրներին գնահատելու համար: Արբիտրներին տրամադրվում է 5 օր, գնահատման թերթիկները լրացնելու և կազմակերպիչին վերադարձնելու համար:
- 2.7 Ընդհանուր փուլի արդյունքում առավելագույն միավորներ հավաքած երկու թիմերը անցնում են եզրափակիչ փուլ:
- 2.8 Ընդհանուր փուլի արդյունքները կհայտարարվեն օնլայն եղանակով, որի ընթացքում նաև կհայտարարվեն այն թիմերը, որոնք անցել են եզրափակիչ փուլ: Ընդհանուր փուլի արդյունքները հայտարարելու ընթացքում նաև կորոշվի թե եզրափակիչում որ թիմն է հանդես գալու որպես հայցվոր, և որ թիմը՝ որպես պատասխանող:
- 2.9 Եզրափակիչ փուլ անցած թիմերը փոխանակվում են գրավոր դիրքորոշումներով, և նրանց տրվում է 2 օր ժամանակ նոր՝ երկրորդ դիրքորոշում (rebuttal) պատրաստելու համար:
- 2.10 Կողմերի ուղարկված երկրորդ դիրքորոշումները ուղարկվում են եզրափակիչ փուլի արբիտրներին, որոնց տրվում է 2 օր ժամանակ գնահատման թերթիկները լրացնելու և վերադարձնելու համար:
- 2.11 Մրցույթի հաղթողը որոշվում է եզրափակիչ փուլի արդյունքում: Այն թիմը, որն առավելագույն միավորները կստանա եզրափակիչ փուլի համար ուղարկած երկրորդ դիրքորոշման համար, կճանաչվի մրցույթի հաղթող:

3 Օնլայն Վիճակահանությունը

- 3.1 Վիճակահանությունն անցկացվելու է օնլայն տարբերակով՝ նախապես որոշված եղանակով, որի մասին թիմերը կտեղեկացվեն լրացուցիչ: Վիճակահանության ընթացքում որոշվելու են այն թիմերը, որոնք պետք է մրցեն Գրավոր Արիտրաժի փուլում:
- 3.2 Վիճակահանության անցկացումից անմիջապես հետո թիմերին կուղարկվեն վիճակահանության արդյունքում որոշված հակառակորդ թիմերի դիրքորոշումները:

4 Թիմի մարզիչը և թիմին օժանդակությունը

- 4.1 Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մարզիչ, սակայն մարզչի ամկայությունը պարտադիր չէ: Մարզիչը կարող է միայն ուղորդել թիմերին՝ պատրաստվելու մրցույթի գրավոր փուլերին: Մասնավորապես՝ նա կարող է մրցույթի մասնակիցներին ծանոթացնել արբիտրաժի կանոններին և հիմնական սկզբունքներին, հետազոտություն կատարելու մեթոդներին: Մարզիչը իրավունք չունի կազմելու գրավոր աշխատանքները մասնակիցների/թիմերի փոխարեն:

5 Գաղտնիություն



- 5.1 Ամբողջ մրցույթի ընթացքում թիմերը չպետք է բացահայտեն արբիտրներին, թե որ համալսարանն են ներկայացնում:
- 5.2 Մրցույթի ընթացքում յուրաքանչյուր թիմ ունենալու է նույնականացման համար, որը նախապես ուղարկվել է թիմի ավագի էլեկտրոնային փոստին և որը օգտագործվելու է ամբողջ մրցույթի ընթացքում:

6 **Գրավոր աշխատանքները**

- 6.1 Գրավոր Արբիտրաժի շրջանակներում յուրաքանչյուր թիմ պետք է ներկայացնի իր երկրորդ գրավոր դիրքորոշումը՝ նախապես ստացած **Չայցվորի** կամ **Պատասխանողի դիրքորոշմանն ի պատասխան**, որոնց PDF և MS Word տարբերակները պետք է ուղարկվեն adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին, պաշտոնական ժամանակացույցով որոշված ժամկետներում:
- 6.2 Թիմերը կարող են վերահանձնել իրենց գրավոր աշխատանքները առանց տույժի ենթարկվելու մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը:
- 6.3 Շատ կարևոր է, որ թիմերը երկրորդ դիրքորոշումներում անդրադառնան հակառակորդ թիմերի հայցում կամ պատասխանում բարձրաձայնված բոլոր փաստարկներին, քանի որ երկրորդ դիրքորոշումները գնահատող արբիտրները մեծ կարևորություն են տալու նրան, թե ինչպես են թիմերը հերքում հակառակորդի բերած փաստարկները:

7 **Գրավոր աշխատանքին ներկայացվող պահանջները.**

Գրավոր աշխատանքը պետք է բաղկացած լինի.

- տիտղոսաթերթից,
- յուրաքանչյուր պահանջը հիմնավորող փաստարկներից (օրենքի կիրառումը փաստերի նկատմամբ),
- Չակառակորդ թիմի փաստարկները մեջբերելիս հղում կատարի դիրքորոշման կոնկրետ կետերին:

Գրավոր աշխատանքը պետք է կազմված լինի.

- A4 ստանդարտով և չորս կողմերից ունենա հավասար լուսանցքեր 2.0 սմ,
- ոչ ավել, քան 10 էջի սահմաններում,
- սիլֆայեն (sylfaen) կամ այլ յունիկոդ տառատեսակով, 12 տառաչափով,
- հղումները և ծանոթագրությունները պետք է լինեն 10 տառաչափով, իսկ տեքստում կատարված մեջբերումները՝ շեղատառ (*Italic*),
- կրկնակի տողաբացվածքով (double-spaced)՝ բացառությամբ տիտղոսաթերթի,
- ծանոթագրությունները՝ միաբացվածքով (single-spaced),
- յուրաքանչյուր պարբերություն պետք է լինի համարակալված:

- 7.1 Դիրքորոշման յուրաքանչյուր տիտղոսաթերթ պետք է պարունակի հետևյալը.
 - թիմի համարը՝ վերևի աջ անկյունում (տրվում է Կազմակերպչի կողմից),
 - նշում այն մասին, թե հայցին է պատասխանում, թե պատասխանին,
 - գործի անվանումը (նշված է գործում),
 - գործում նշված կողմերի անվանումները (նշված է գործում),



- ամիս, ամսաթիվ, տարեթիվ:

8 Գործի փաստերի շարադրումը և հիմնավորումները

- 8.1 Փաստերը շարադրելիս թիմերը պետք է սահմանափակվեն խնդրում առկա փաստերով և չփորձեն ավելացնել նոր, չապացուցված փաստեր կամ խեղաթյուրել դրանք:
Խորհուրդ է տրվում փաստարկները և իրավական հիմնավորումները ներկայացնելիս օգտվել տարատեսակ աղբյուրներից, այդ թվում՝ գիտական հոդվածներից, դասագրքերից, արբիտրաժային և դատական գործերից, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններից և այլն:
- 8.2 Գրավոր աշխատանքի մեջ օգտագործված աղբյուրներին հղում կատարելու համար պետք է օգտագործվեն ծանոթագրություններ (footnotes):
- 8.3 Գրավոր աշխատանքը պետք է լինի բացառապես մասնակցող թիմերի անդամների մտավոր գործունեության արդյունքը:
- 8.4 Երրորդ անձի ստեղծագործության ոչ իրավաչափ օգտագործումը առանց հղում կատարելու, համարվում է գրագողություն (պլագիատ): Գրագողություն հայտնաբերելու դեպքում կկիրառվի տույժ 10-30 միավոր՝ կախված ծավալից:

9 Գնահատման չափանիշները և կարգը

- 9.1 Գրավոր Արբիտրաժի փուլերի գնահատման չափանիշները հետևյալն են.
 - Փաստերի և իրավունքի իմացության համադրություն՝ 30 միավոր,
 - Ուսումնասիրության մակարդակ և օգտագործված աղբյուրներ՝ 30 միավոր,
 - Պատշաճ վերլուծություն՝ 20 միավոր,
 - Կազմակերպվածություն և շարադրանքի հստակություն՝ 10 միավոր,
 - Ոճ, գրագիտություն՝ 10 միավոր:
- 9.2 Գրավոր երկրորդ դիրքորոշումները գնահատվում են առավելագույնը 100 միավոր յուրաքանչյուր գնահատող արբիտրի կողմից: Մրցույթի հաղթողը կորոշվի եզրափակիչ փուլի արդյունքներով:
- 9.3 Թիմերին գնահատելիս արբիտրները գնահատում են 9.1-րդ կետում նշված չափանիշների համար առանձին-առանձին և նշված միավորների սահմաններում:
- 9.4 Սահմանված են հաղթող թիմ, երկրորդ տեղը զբաղեցնող թիմ, լավագույն գրավոր աշխատանք և այլ մրցանակներ:

10 Արբիտրները

- 10.1 Գրավոր աշխատանքները գնահատվում են 3 (երեք) արբիտրների կողմից:
- 10.2 Ընդհանուր փուլում գրավոր աշխատանքները ստանալուց հետո արբիտրները ունեն 5 օր աշխատանքները գնահատելու համար: Եզրափակիչ փուլի համար ուղարկված երկրորդ դիրքորոշումները գնահատելու համար արբիտրներին կտրվի 2 օր ժամանակ:
- 10.3 Մրցույթի արբիտրները կլինեն գործող արբիտրներ, փաստաբաններ, իրավաբաններ և դատավորներ: Մասնակիցները նախօրոք կձանուցվեն իրենց արբիտրաժային գործը ստուգող 3 (երեք) արբիտրների կազմի վերաբերյալ:
- 10.4 Եզրափակիչ փուլում կարող են նշանակվել 3-ից ավել արբիտրներ:

11 Ժամկետներ



- 11.1 Մրցույթի մասնակցության ժամկետների պահպանումը հանդիսանում է էական պայման:
- 11.2 Մրցույթի ժամկետների փոփոխությունների վերաբերյալ կողմերը կտեղեկացվեն թիմի ավագի էլ. փոստի կամ հեռախոսի միջոցով:

12 Կազմակերպիչի հետ կապը

- 12.1 Մրցույթի վերաբերյալ հարցերը կարող եք ուղղել adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին կամ զանգահարել 055 888325 հեռախոսահամարով: